

«Միշտ մէկ փամփուշտ
իրենց համար են պահում»
Նոյեմբեր 5ը Հայոց բանակի
հետախույզներու օրն է



Կարդալ էջ 3

ՀՄԸՄ-Կամք մասնաճիւղի
հիմնադրութեան
60-ամեակը նշուեցաւ
Մոնթրէալի մէջ



Կարդալ էջ 5

Արթուր Խաչատրեան. «Ապրել ազատ,
անկախ ու միացեալ Հայրենիքում»



Կարդալ էջ 4

«Համազգայինի ծրագիրները միշտ
մեր ուժերէն վեր եղած են, բայց յամառութեամբ
ու յարատեւ ջանքերով անոնք իրականացուած են».
Մկրտիչ Մկրտիչեան



Կարդալ էջ 6



HONDA GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4

514 327-7777
www.hondagabriel.com

Kevork Asadourian
Vahan Vartanian
Haig Khobassarian

HONDA



The Essence of Mediterranean Gourmet



*Taste Wonderful
Taste Arz Fine Foods*



ARZ Fine Foods
1909 Lawrence Ave E, Scarborough, ON (416•755•5084), www.arzfinefoods.com

«Միշտ ՄԷկ Փամփուշտ Իրենց Համար ԵՈ Պահում»

Նոյեմբեր 5–ը Հայոց բանակի հետախոյզներու օրն էր, անոնց տօնը։ Այս առ–
թիւ, «Բաւնիւղ»ի մէջ կը կարդանք Արեւիկ Գրիգորեանի հետեւեալ գրառումը.

«Այսօր հայկական բանակի այն ստորաբաժանման օրն է, ովքեր առաջադրան–
քի գնալուց միշտ մէկ փամփուշտ իրենց համար են պահում եւ պատրաստ գնում են
կեանքի եւ մահուան կռուի։

Նրանց անունները մենք չենք իմանում, նրանց դէմքերը ցոյց չեն տալիս,
նրանց կատարածի մասին շատ դէպքերում 2–3 հոգի է իմանում, բայց նրանք մեր հե–
տախոյզներն են, ովքեր նոյնիսկ թշնամու թիկունքում իրենց վստահ են զգում։

Տարիներ շարունակ կատարելագործուել է Հայոց բանակի հետախոյզի դպրոցը
ու մեծ ազդեցութիւնն է ունեցել առաջնագծում տիրող իրավիճակի վրայ։ Թշնամին
շատ անգամներ է հաշուի նստել մեր հետախոյզների կատարած գործողութիւնների
հետ։

Տօնդ շնորհաւոր անգերազանցելի հայ հետախոյզ»։



Որոշումը կայացուելու է Արցախում

Թրամփեան Ամերիկայի շուռչը անցեալ շաբաթուայ ընթացքում զգաց նաեւ
կովկասի տարածաշրջանը։ Անվտանգութեան հարցերով ԱՄՆ նախագահի խորհրդա–
կան ճոն Պոլթոնը Թրամփեան ամերիկայի հռետորաբանութեամբ այցելեց տարա–
ծաշրջան՝ Վրաստանին, Ադրբեջանին եւ Հայաստանին հրամցրեց Ամերիկեան շահը
գերակայող քաղաքականութեան «առաջարկները», որոնք, ըստ էութեան, ոչ թէ
առաջարկ էին, այլ սպառնալիքով համեմուած թելադրանք։ Ինչքան էլ Հայաստանի
արտաքին քաղաքականութեան եւ անվտանգութեան պատասխանատուները պնդեն,
թէ Պոլթոնի ասուելիսներում հնչեցրած մտքերը պաշտօնական բանակցութիւնների
նիւթ չեն դարձել, պէտք է հաստատենք, որ հենց այդ միջոցով էլ Պոլթոնը փորձեց
Հայաստանին հրամցնել Ամերիկեան մօտեցումներն ու սպասելիքները Հայաստանից։

Պոլթոնի արտայայտութիւնները կարող են թուալ մանրուքներ, սակայն ընդ–
հանուր քաղաքականութիւնը, որպէս համակարգ, բաղկացած է հենց այդ մանրուք–
ներից։ Եւ հենց այդ մանրուքներն են կերտում ընդհանուր քաղաքական հայեցա–
կարգը։ Ըստ ամենայնի, Պոլթոնի այցով Ամերիկան Հայաստանին առաջարկեց դառ–
նալ ոչ թէ հիւսիս–հարաւ կապող օդակ, այլ արեւելք–արեւմուտք միջանցք, որը տե–
ղաւորում է ամերիկեան գերակալ ծրագրերի մէջ եւ որով Ամերիկան փորձում է ակ–
տիվացնել իր հաւակնութիւնները տարածաշրջանում։ Եւ այդպէս պահանջուեց Հա–
յաստանից՝ ձեռքադատուել պատմական կաղապարներից, «անկախանալ» Ռուսաս–
տանից՝ Ամերիկայից գէնք գնելով, մասնակցել Իրանի դէմ ուղղակի սեղմմանը, յա–
ռաջիկայ ընտրութիւններում ձեւաւորել ուժեղ մանդատ Արցախում կտրուկ քայլերի
գնալու համար, որը ենթադրում է՝ տարածքներ հաղորդակցման ուղիների դիմաց
պայմանաւորուածութիւններ։

Պարզ է, որ Հայաստանը, այդ թւում՝ Արցախը, Ամերիկայի մեծապետական շա–
հերի համար «մանրուքներ» են, բայց մեզ համար քաղաքական ուղղութեան փոփո–
խութիւնը կարող է յանգել լինել կամ չլինելուն։ 1918–թ յունուարին Բրեստ–Լի–
տովսկի պայմանագրով Հայաստանը զոհ գնաց բոլշեւիկեան Համաշխարհային յեղա–
փոխութեանը՝ ռուսական զօրքերը նահանջեցին Արեւմտեան Հայաստանից։ 2003–ի
վարդերի յեղափոխութիւնից յետոյ Վրաստանը գնաց այդ ճամբով եւ 2008–ի ռուս–
վրացական պատերազմից յետոյ վերջնականապէս զոհաբերուեց յանուն Թուրքիայի
եւ Ադրբեջանի միջեւ միջանցքի կառուցմանը։ Իսկ հիմա Ամերիկան մեզ հրաւիրում է
իր ծրագրերի զոհասեղանին։

Հասկանալի է, որ Ամերիկայի կողմից մեզ արուած այս առաջարկները այն
առաջարկներից չեն, որ արւում են սեփական կամքով դրանք ընդունելու կամ մեր–
ժելու դիտանկիւնով։ Դրանք իրանց յետեւից բերելու են թէ՛ պարտադրանք, թզ՝
պատժամիրոց եւ, ինչու չէ, ընդունման դէպքում՝ խրախուսանք։ Դժուար ընտրու–
թեան առաջ է կանգնած Հայաստանի Հանրապետութեան ղեկավարութիւնը։ Որպէս
դիմակայութեան առաջին քայլ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը Արցախեան հարցի
ճակատագրի որոշման գերակատար դարձրեց նաեւ սփիւռքին՝ փորձելով դիմակայու–
թեան ճակատը ընդլայնել, սակայն, ըստ ամենայնի, ծանր է լինելու վերջնական
որոշման կայացման հանգրուանը։ Իսկ այդ որոշման գաղափարական հնոցը եւ դի–
մակայութեան վերջնակէտը, ինչպէս 30 տարի առաջ, վճռուելու է Արցախում։

Խմբագրական «Ապառաժ»ի
ՀՅԴ Արցախի Կեդրոնական Կոմիտէի պաշտօնաթերթ



ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՒ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՍԻՐՈՅ ՃԱՇ

Նուիրում՝ Թեմիս Անդրանիկ Առաջնորդ
Գերաշնորհ Տ. Խաժակ Արք. Յակոբեանի
Քահանայական Ձեռնադրութեան 50-ամեակին

Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի անունով, ընդունեցէք մեր երախտագիտական
ջերմ զգացումներն ու գնահատանքը առ այն, որ դուք նման քաջալերանքով սատար հանդիսացաք
«Հոգեւորականներու Ուսման Ֆոնտ»ին։

Արմոյեան Ընտանիք \$5000

Տէր եւ Տիկին Զաւէն եւ Վարսենիկ Սարգիսեան \$2500

Տէր եւ Տիկին Արթօ եւ Ալիս Մարգարեան \$2000
Տէր եւ Տիկին Կարօ եւ Լենա Փոստաճեան

ՀՕՄ ԵրջանայինՎարչութիւն \$1000
Տէր եւ Տիկին Վահէ եւ Հոփի Թոքմաքճեան
Տիկին Շաքէ Կեօնճեան
Տէր եւ Տիկին Սիմոն եւ Սիլվա Փոլատեան

Տէր եւ Տիկին Ալպէր եւ Լէյլա Արոյեան \$500
Տէր եւ Տիկին Գրիգոր եւ Անի Գոյումճեան
Տէր եւ Տիկին Փիլոն եւ Ծովիկ Թերգեան
Տոքթ. եւ Տիկին Ժիրայր եւ Յասմիկ Պասմաճեան
Տէր եւ Տիկին Խաչիկ եւ Ատրինէ Օհանեան

Տէր եւ Տիկին Վարուժան եւ Անի Սերոբեան \$400

Գերաշնորհ Տ. Սուրէն Արք. Գաթարոյեան \$300
Տէր եւ Տիկին Յակոբ եւ Աննա Պուկկարեան
Տէր եւ Տիկին Յակոբ եւ Կարին Տէր Յակոբեան
Տէր եւ Տիկին Նիզակ եւ Էլիզապէթ Տէր Յովակիմեան

Տէր եւ Տիկին Համբիկ եւ Լիւսի Գարայեան \$250
Պրն. Սարգիս Գոյումճեան
Տէր եւ Տիկին Բարգէն եւ Արմիկ Կարապետեան
Տէր եւ Տիկին Աբրահամ եւ Օսիկ Մխիթարթինեան
Տէր եւ Տիկին Յակոբ եւ Անահիտ Տէր Խաչատուրեան
Պրն. Գրիգոր Տէր Ղազարեան
Տէր եւ Տիկին Մովսէս եւ Վանտա Քեօսէյեան

Տէր եւ Տիկին Պետրոս եւ Ռոզմարի Ալահայրոյեան \$200
Տէր եւ Տիկին Յովհաննէս եւ Սեդա Գաթարոյեան
Պրն. Արտաշէս Գարակոբեան
Տէր եւ Տիկին Վիգէն եւ Թալին Գրիգորեան
Տոքթ. եւ Տիկին Վաղարշ եւ Արուս Էնրամճեան
Տոքթ. եւ Տիկին Օհան եւ Սեդա Թապազեան
Տէր եւ Տիկին Նազարէթ եւ Վարսենիկ Խաչիկեան
Տոքթ. եւ Տիկին Կարպիս եւ Էլիզապէթ Հարպոյեան
Տէր եւ Տիկին Յակոբ եւ Տիրուկ Մանճիկեան
Տէր եւ Տիկին Յովհաննէս եւ Լենա Մինոյեան
Տէր եւ Տիկին Մանուկ եւ Սիլվա Պաշքճեան
Տէր եւ Տիկին Ճորճ եւ Մարօ Պասմաճեան
Տէր եւ Տիկին Լեւոն եւ Ֆիլոր Պէնկեան
Տէր եւ Տիկին Յարութ եւ Մարալ Պերպլեան
Տէր եւ Տիկին Շահէ եւ Ռոզալին Զարեան
Տէր եւ Տիկին Տիգրան եւ Լիզա Վահրատեան
Տէր եւ Տիկին Խոբէն եւ Սօւէ Տիմիթեան
Տէր եւ Տիկին Վարդավառ եւ Արփի Փանոսեան
Պրն. Յակոբ Ֆրունճեան

Տէր եւ Տիկին Մեսրոպ եւ Սիլվա Պրէճիքեան \$150

Տէր եւ Տիկին Ռաֆֆի եւ Սեդա Տօնապետեան \$130

Արժանապատիւ Տ. Վիգէն Աւ. Քնկ. Վասիլեան \$100

Տէր եւ Տիկին Յակոբ եւ Անի Արեւեան
Տէր եւ Տիկին Վրէժ-Արմէն եւ Նազան Արթինեան
Տէր եւ Տիկին Վարդան եւ Նայիրի Բաբախեան
Տէր եւ Տիկին Կարապետ եւ Անժէլ Գաթարոյեան
Տէր եւ Տիկին Պետիկ եւ Ծովիկ Գահվէճեան
Տէր եւ Տիկին Լեւոն եւ Անի Եադճեան
Տոքթ. Վիգէն Թիւֆէնքճեան
Տէր եւ Տիկին Զաւէն եւ Յասմիկ Ինճէճիկեան
Երեցիկն Շաքէ Իշխանեան
Տիկին Շաքէ Յակոբեան
Տիկին Սալբի Մարգարեան
Տէր եւ Տիկին Յարութ եւ Հերմինէ Մանուկեան
Տէր եւ Տիկին Տանիէլ եւ Սիւզի Մարկոբեան
Տէր եւ Տիկին Ստեփան եւ Հուրի Նաճարեան
Տէր եւ Տիկին Զարեհ եւ Վիքի Պապիկեան
Տիրահայր եւ Տիրամայր Անդրանիկ եւ Ժաքլին Զարեան
Տէր եւ Տիկին Յովիկ եւ Ռիթա Զարեան
Տէր եւ Տիկին Զարեհ եւ Լիոնի Մարմազեան
Տոքթ. եւ Տիկին Վազգէն եւ Լենա Տէր Գալուստեան
Տէր եւ Տիկին Եղուարդ եւ Մարօ Ֆրունճեան

Տիկին Նուարդ Թաշճեան \$50

ԴԻԻԱՆ
ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Արթուր Խաչատրեան. «Ապրել ազատ, անկախ ու միացեալ Հայրենիքում»

Նոյեմբեր 2-ին Նոր Զուղայի մէջ տեղի ունեցած է Դաշնակցութեան օր-ուան նուիրուած հանդիսութիւն, որուն ընթացքին, որպէս բանախօս, հանդէս եկած է ՀՀ Գիւղատնտեսութեան նախկին նախարար, ՀՅԴ անդամ Արթիւր Խաչատրեան:

«Դաշնակցութիւնը մարմնաւորում է մեր ժողովրդի իղձերն ու նպատակները՝ ապրել ազատ անկախ ու միացեալ Հայրենիքում: Այս նպատակին հասնելու համար երեք դարերի ընթացքում տասնեակ հազարաւոր դաշնակցականներ պայքարում են սրով, գրչով եւ բահով», նշած է ան:

«Հայաստանը պէտք է վարի իր անկախ արտաքին քաղաքականութիւնը, այլ ոչ թէ այլ պետութիւնների ձեռքին խաղալիք դառնալ կամ սպասի, թէ այլ տէրութիւններ ի՞նչ խորհուրդներ կը տան՝ ինչպէս եւ դէպի ուր շարժուել: Եւ վերջապէս, մենք պայքարում ենք Միացեալ Հայաստան կերտելու համար: Հայաստանի քաղաքական ուժերից մենք թերեւս միակն ենք, որ վառ ենք պահում կորցրած հայրենիքը յետ բերելու տեսլականը», ըսած է ան:

«1918 թուականի Մայիսին, դարեր շարունակ Հայոց գահը կորցնելուց յետոյ, Հայաստանը եղել է զուտ աշխարհագրական տեղանուն, եւ Դաշնակցութիւնն էր, որ Հայաստանը դարձեալ դարձրեց քաղաքական անուն: Դաշնակցութիւնն էր, որ կազմակերպեց եւ ղեկավարեց Հայոց զինեալ պայքարը եւ ժողովրդի ինքնապաշտպանութիւնը 19-րդ դարի վերջում եւ 20-րդ դարի սկզբում: Դաշնակցութիւնն էր, որ դարերի ընդմիջումից յետոյ վերականգնեց Հայոց պետականութիւնը: Անկախ պետականութեան կորստից յետոյ կազմակերպեց Սփիւռքը, նուիրուեց հայապահպանութեան գործին, արթուն պահեց անկախութիւնը վերականգնելու յոյսը: Դաշնակցութիւնն էր, որ Արցախեան ազատամարտի առաջին օրերից կանգնեց ռազմաճակատի առաջնագծում: Այն ժամանակ, երբ Սովետական Պերստրոյկայով խանդավառ ժողովուրդը «Լենին, պարտիա, Կոռպաչով» էր վանկարկում, Դաշնակցութիւնն Արցախում զինեալ ջոկատներ էր ստեղծում, կամաւորներ էր

զինուորագրում: Յաւօք, նրանց շատերը չվերադարձան տուն...»

Հայաստանի անկախութեան վերականգնումից յետոյ էլ Դաշնակցութիւնը միշտ սատարել է մեր պետականութեան կայացմանը, նոյնիսկ այն ժամանակ, երբ օրուայ իշխանութիւնների կողմից քաղաքական հալածանքների էր ենթարկւում: Յիշենք 1992-ին ընկ. Հրայր Մարտիրոսեանի արտաքսումը Հայաստանից, 1994-ի Դեկտեմբերին ՀՅԴ գործունէութեան կասեցումը Հայաստանում ու մեր բազմաթիւ ընկերների կալանաւորումը՝ կեղծ մեղադրանքով, 1995-ին նոր բանտարկութիւններ ու ընտրութիւններին մեր մասնակցութեան արգելքը», նշած է բանախօսը:

Անոր խօսքով՝ այո՛ւ՝ ՀՅԴ-ն մաս կազմած է Ռուբեն Քոչարեանի կառավարութեան, համագործակցած է այդ օրուան իշխանութիւններուն հետ, քանի որ մօտեցումները, մասնաւորապէս՝ Արցախի եւ Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման ու փոխհատուցման հարցերով համընկնած են:

«Սակայն, մաս կազմելով կառավարութեանը, մենք ունեցել ենք մեր ուրոյն ոճն ու ձեռագիրը՝ երբեք չնոյնանալով իշխող կուսակցութեան հետ, փորձելով ներսից շտկել կառավարութեան քաղաքականութիւնը: Երբեմն դա մեզ յաջողուել է, երբեմն՝ ոչ կամ ոչ այն աստիճանի, որ կը ցանկանայինք», ըսած է Խաչատրեան, աւելցնելով որ 2009-ին ալ, համաձայն ըլլալով Սերժ Սարգսեանի «Ֆուլթոլային դիւանագիտութեան», ՀՅԴ-ն դուրս եկաւ իշխող կուլիցիայից եւ դարձաւ կառավարութեան անխնայ քննադատը:

Ըստ իրեն՝ 7 տարի ըլլալով ընդդիմադիր, 2016-ի դարձան ՀՅԴ-ն ընդունեց նախագահ Սերժ Սարգսեանի՝ նոր կառավարութեան մաս կազմելու հրաւերը այն պարզ պատճառով, որ երկրին մէջ սոցիալ-տնտեսական իրավիճակը ծանր էր, եւ հանրապետականները կը գիտակցէին, որ անհրաժեշտ է Դաշնակցութեան հետ համագործակցել՝ իրավիճակը շտկելու համար:

«Միանալով կառավարութեանը՝ մենք շարունակել ենք ներսից պայքարել իրական բարեփոխումների անցկացման

համար՝ մշտապէս իշխանութիւններին մատնացոյց անելով երկրում առկայ դժուարութիւնները, ժողովրդական դժգոհութեան աճող մակարդակը, կոռուպցիոն երեւոյթների անթոյլատրելիութիւնը, քրէական եւ պիզնես շրջանակների (այսպէս կոչուած՝ օլիկարխների) քաղաքական դաշտ մուտք գործելու անթոյլատրելիութիւնը: Առանձնապէս չեւտադրել էինք կոռուպցիայի դէմ պայքարի անհրաժեշտութիւնն ու 2017 թուականին ազատ, արդար ու թափանցիկ խորհրդարանական ընտրութիւններ անցկացնելու հրամայականը: Յաւօք, մեր նախագահութեանը տեղ չհասան: Սոցիալական բեւեռացումը, տնտեսութեան ու քաղաքականութեան մէջ կլանային համակարգի ձեւաւորումը, կոռուպցիան եւ բացայայտ աճուրդի վերածուած ու ժողովրդի տրամադրութիւնները չարտայայտող խորհրդարանական ընտրութիւնները Հայաստանում ժողովրդական ընդվզումը դարձրեցին անխուսափելի:

Ջարգացումների հետագայ ընթացքին դուրս անշուշտ տեղեակ էք: Ապրիլի 25-ին ՀՅԴ-ն դադարեցրեց իր համագործակցութիւնը Հանրապետական կուսակցութեան հետ եւ դուրս եկաւ քաղաքական կուլիցիայից՝ իր աջակցութիւնն ու գորակցութիւնը յայտնելով ժողովրդական շարժմանը: Մայիսի 8-ին Նիկոլ Փաշինեան ընտրուեց Հայաստանի Հանրապետութեան վարչապետ եւ հրաւիրեց Դաշնակցութեանը՝ մաս կազմելու ազգային համաձայնութեան կառավարութեանը: Կառավարութիւնում ՀՅԴ ստանձնեց նախարարական երկու պորտֆել՝ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարութիւնը (աւելի յաճախ այս նախարարութիւնը կոչուում է իր հին անունով՝ էկոնոմիկայի նախարարութիւն) եւ գիւղատնտեսութեան նախարարութիւնը: Վերջինիս պատասխանատուութիւնը ստանձնեցի ես: Դաշնակցութիւնը ստանձնեց նաեւ երկու մարզերի՝ Արագածոտնի եւ Գեղարքունիքի պատասխանատուութիւնը», նշած է բանախօսը, աւելցնելով որ իրենց գործունէութիւնը իրականացնելու համար դաշնակցական նախարարներն ու մարզպետները որդեգրած են մի քանի յստակ մօտեցումներ, որոնք բխած են Դաշնակ-

ցութեան արժէքային համակարգէն, ջանք չեն խնայած իրենց ոլորտներու կամ մարզերու զարգացման համար:

Սակայն, ըստ Խաչատրեանի, Հայաստանի մէջ քաղաքական մթնոլորտը երթալով կը շիկանար. քաղաքական ուժերը սկսան բաժնել սեւերու եւ սպիտակներու, յեղափոխականներու եւ հակաիշխանականներու, քաղաքական խորհրդակցութիւնները քաղաքական ուժերու միջեւ կանգ առին, յառաջացան ջրբաժաններ, իսկ երեւանի աւագանին ընտրութիւնները ցոյց տուին, որ ազգային համաձայնութեան կառավարութիւնը ալլելս երկար չի դիմանար: Իշխող քաղաքական ուժը, առանց կառավարութեան գործընկերներու հետ քննարկումներու, առանց համապատասխան ընտրական միջավայրի ձեւաւորման պարտադրեց ընտրութիւնները իրագործել այս տարուան Դեկտեմբերին: ՀՅԴ-ն ետ կանչեց իր նախարարները եւ ցրուեց ազգային համաձայնութեան կառավարութիւնը:

«Սակայն, նոյնիսկ այժմ, գտնուելով ընդդիմադիր դաշտում, Դաշնակցութիւնն առաջնորդուում է կառուցողականութեան սկզբունքներով՝ աջակցելով կառավարութեան այն նախաձեռնութիւններին, որոնք նպաստում են Հայաստանի Հանրապետութեան տնտեսական զարգացմանն ու հայկական երկու պետութիւնների անվտանգութեան ապահովմանը եւ անխնայ քննադատելով կառավարութեան այն քայլերը, որոնք հակասում են մեր սկզբունքներին», ըսած է բանախօսը:

«Երկիրը կանգնած է ընտրութեան առաջ: Անցեալին արդէն վերադարձ չկայ: Այժմ պէտք է անցնել երկրի կառուցման բարդ ու պատասխանատու գործին: Դաշնակցութիւնն՝ իր համահայկական կառույցով, ունի բաւականաչափ կամք, միտք եւ ուժ՝ ստանձնելու երկրի նկատմամբ պատասխանատուութեան իր բաժինը: Յոյս ունեմ, որ գալիք ընտրութիւններում Հայաստանի ժողովուրդը ճիշդ ընտրութիւն կը կատարի եւ ընտրի այն ուժին, որն արդէն 128 տարի իր կողքին է, երբեք նրան չի դաւաճանել եւ առաջնորդել է ժողովրդին վճռական պահերին», խոյթն եզրափակած է Արթիւր Խաչատրեան:

 Ghadir Meat & Restaurant T. 416-750-7404 T. 416-750-7400 1848 Lawrence Avenue E. Scarborough, ON M1R 2Y4 E-mail: info@ghadirmeatmarket.com	 Sutton BAKERY AND FINE FOODS Since 1981 OPEN 7 DAYS A WEEK! WEDNESDAY 8 AM - 7 PM SATURDAY 8 AM - 6 PM SUNDAY 8 AM - 5 PM LOCATION: 2094 LAWRENCE AVENUE EAST ON THE NORTH-EAST CORNER OF LAWRENCE AND WARDEN	 Noor Fine Food Gourmet Mediterranean Cuisine 1 High Meadow Place, Unit 9 Toronto, Ontario M9L 2Z5 Tel 416 745 3111 Fax 416 745 9337
 ANI Restaurant 905.761.6484 1450 Clark Ave. West, Thornhill ON L4J 7R5	 Sutton Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage 1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0 Annie Varbedian Sales Representative Direct: (416) 918-3615 Office: (416) 739-7200 Fax: (416) 739-9367 annievarbed@hotm.com www.suttongroupadmiral.com	 hearing aid source Andre Ayvazyan HIS B.A.S andre@HearingAidSource.ca 416 754 4327 (HEAR) Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9
 Crown Pastries Fine Middle Eastern Pastries 2086 Lawrence Ave East (Lawrence & Warden) Toronto ON. M1R 2Z5 Tel 647.351.2015 www.crownpastriesbaklava.com	 I.D.A. Part of the Bozell family of pharmacies. Pharmacists Sarkis Balian Vartan Balian Maral Abdalian Balian	 ANI BAKERY ԱՆԻ ՓՈԱՊԱՆ Middle Eastern Pizza Lahmajoun ARSEN DABBAGHIAN 25 Howden Road, Unit #2 Scarborough, Ontario M1R 3C8 Tel: 416.285.7164

ՀՄԸՄ-Կամք մասնաճիւղի հիմնադրութեան 60-ամեակի հանդիսութիւն



Կազմակերպութեամբ ՀՄԸՄ-Կամք մասնաճիւղի վարչութեան եւ գործադրութեամբ 60-ամեակի յանձնախումբին, Շաբաթ, 27 Հոկտեմբեր 2018-ի երեկոյեան ժամը 8:00-ին տեղի ունեցաւ մասնաճիւղի հիմնադրութեան 60-ամեակին նուիրուած յօրհանականը, Մոնթրէալի Հայ կեդրոնի ՀՄԸՄ-Կամքի «Հայկ Մարգարեան» մարզարանէն ներս:

Հանդիսութեան ներկայ էին Գանատայի Թեմիս առաջնորդ Գերշ. Տ. Բաբգէն Արք. Չարեան, Գերշ. Տ. Սուրէն Արք. Գաթարոյեան՝ հոգեւոր տեսուչ Ս. Յակոբ Մայր եկեղեցւոյ, Հոգշ. Վարդան Վրդ. Թաշճեան՝ հոգեւոր հովիւ Լաւալի Ս. Գէորգ եկեղեցւոյ, Գանատայի Ազգային վարչութեան ներկայացուցիչ, ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան անդամ եղբ. Մոսիկ Թօփուզեան, ՀՄԸՄ-ի Շրջանային վարչութեան անդամներ, քոյր միութեանց ներկայացուցիչներ, օրուան նախագահ տիկ. Տիանա Հաճէթեան, յարգարժան նուիրատուներ եւ մեծ թիւով ՀՄԸՄ-ական քոյր-եղբայրներ եւ համակիրներ:

Բացումը կատարուեցաւ մասնաճիւղիս փողերախումբին կշռոյթով սկառտներու տողանցքով եւ միութեանս, Հայաստանի եւ Գանատայի քայլերգներով:

Օրուան բեմավար եղբ. Լեւոն Գաբրիէլեան բարի գալուստ մաղթեց բոլորին եւ ներկաներէն խնդրեց, որ մէկ վայրկեան յոտնկայս յարգանքի տուրք մատուցեն առյաւէտ հեռացած միութեանս քոյր-եղբայրներուն յիշատակին:

Հերթով սրտի խօսք փոխանցեցին վարչութեանս ատենապետը, ՀՄԸՄ-ի Շրջանային վարչութեան ատենապետուհին եւ ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչը: Մասնաճիւղիս ատենապետ եղբ. Մանուէլ Քէօսէեանը

իր խօսքին մէջ անդրադարձաւ հիմնադրութեան օրերուն մասնաճիւղիս յաղթահարած դժուարութիւններուն, ապա արձանագրած իրարայաջորդ պատուաբեր յաղթանակներուն, որոնք հպարտութիւն կ'առնեն Գանատայի Հայ գաղութին: Ան շնորհակալական խօսք ուղղեց երէց եղբայրներուն՝ իրենց տարած անխոնջ աշխատանքին համար եւ կոչ ուղղեց նորահաս սերունդին՝ զգօն ըլլալու եւ ծայր առած առաքելութիւնը շարունակելու՝ ամենայն բծախնդրութեամբ:

ՀՄԸՄ-ի Շրջանային վարչութեան ատենապետուհի քոյր Լէոնի Սարմազեան շնորհաւորեց մասնաճիւղիս վարչութիւնը իր վաթսուեանայ բեղուն աշխատանքին համար, որ հայ արժէքները վառ պահեց եւ հիմնադրութեան օրէն իսկ եղաւ առաջատար առաջնորդը: Ան իր խօսքին աւարտին թելադրեց, որ նոյն գիտակցութեամբ եւ կարգապահութեամբ շարունակուի սերունդներու դաստիարակութիւնը՝ բարձրանալ եւ բարձրացնելու Հայ ժողովուրդին անունը:

Եղբ. Մոսիկ Թօփուզեան ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան կողմէ իր արտասանած խօսքին մէջ շնորհաւորեց միութեանս հիմնադրութեան 60-ամեակը եւ ըսաւ, թէ ՀՄԸՄ-ը ուր որ արմատ նետած ու ծաղկած է, այդ հողն ու ջուրը դարձած են պարարտ, եւ եռագոյնն ու ՀՄԸՄ-ի գոյգ դրօշները եղած են յուշարարներ մեր հիմնադիրներուն ժառանգ ձգած կտակին ու տեսլականին: Ան խրախուսելով բոլոր ՀՄԸՄ-ականները, կոչ ուղղեց ընթանալու դէպի առաջ, դէպի նոր վաթսուամեակներ եւ դէպի յաղթական ապագայ:

Ապա տեսերիցի միջոցաւ ներկայացուեցաւ պատմականը վաթսուամե-

այ մասնաճիւղին:

Բեմ հրաւիրուեցաւ վարչութեանս ատենապետը, որպէսզի յուշատախտակով պատուէ մեր յարգարժան նուիրատուները՝ տիկ. Տիանա Հաճէթեանը, տէր եւ տիկ. Արա եւ Մարալ Իմամէճեանները, տէր եւ տիկ. Արթօ եւ Ալիս Մարգարեանները, քոյր Անահիտ Մարգարեանը, տէր եւ տիկ. Մայք եւ Գարին Կիրակոսեանները, Շաբէ, Զաւէն եւ Նորա Կէօնճեանները, տղթ. Արմէն եւ տիկ. Փաուլա Աբրիկեանները, տէր եւ տիկ. Լեւոն եւ Աննա Աֆէեանները եւ տէր եւ տիկ. Շանթ եւ Լիզ Իմամէճեանները: Շնորհակալական խօսք ուղղուեցաւ նաեւ հետեւեալ նուիրատուներուն. տէր եւ տիկ. Հրանդ եւ Նուշիկ Գաբրիէլեանի, տէր եւ տիկ. Շանթ եւ Քրիստին Թոպիի, տէր եւ տիկ. Արեգ եւ Քրիստին Մարգարեանի, տէր եւ տիկ. Յարութ եւ Մարալ Չարֆաճեանի, տղթ. Պետրոս եւ Թագուհի Պազըրճեանի, տէր եւ տիկ. Մանուէլ եւ Թալին Քէօսէեանի, Ռիթա, Էլիզապէթ, Կարօ եւ Ռաֆֆի Օհանեաններու, ինչպէս նաեւ բոլոր նուիրատուներուն:

Վաթսուամեակի յանձնախումբի ատենապետուհի ք. Սօսի Տայեան իր սրտի խօսքը փոխանցեց եւ շնորհակալութիւն յայտնեց մասնաճիւղիս վարչութեան, որ մօտէն կը հետեւէր աշխատանքներուն եւ նեցուկ կանգնեցաւ, որպէսզի տարուան ընթացքին բոլոր ձեռնարկները յաջողութեամբ պսակուին:

Ապա բեմ բարձրացան պատգամաբեր եղբայրներ Արա Իմամէճեան եւ Լէօն Արապեան, որոնք անդրադարձան ՀՄԸՄ-ի հիմնադրութեան կարեւորութեան, որմէ 40 տարիներ ետք ծնունդ առաւ ՀՄԸՄ-ի Մոնթրէալի մասնաճիւղը՝ հիմադիրներուն նոյն տեսիլքէն ու նոյն գաղափարէն մեկնելով: Գործունէութիւնը սկսած էր նախ Յունաստանէն գաղթած

խումբ մը ոտնադնդակի մարզիկներով՝ «Արմենիա» անունին տակ: Անկէ քանի մը տարի ետք, Եգիպտոսի Աղեքսանդրիոյ «Կամք» Մարմնամարզական Միութեան անդամները միանալով անոնց՝ մասնաճիւղը վերանուանուած էր ՀՄԸՄ-Կամք:

Անոնք յայտնեցին, թէ ՀՄԸՄ-Կամքը իր գործունէութիւնը շարունակեց, ու կազմուեցան սկառտական շարքերը: Տարիներու ընթացքին մարզական այլ ձեւեր ալ մուտք գործեցին միութեանէն ներս, եւ այժմ մասնաճիւղս ամրացած ու հզօրացած է ու հիմա կը հաշուէ 700-էն աւելի անդամներ, որոնցմէ 460-ը սկառտներ են եւ 200-ը՝ մարզիկներ:

Այս գոյգին ելոյթէն ետք, եղան ինքնաբոլոս նուիրատուութիւններ երէց եղբ. Վարուժան եւ ք. Անի Սերոբեանին, եղբ. Աւագ եւ տիկ. Քրիստին Գահուէճեանին կողմէ:

Բեմ հրաւիրուեցաւ Հոգշ. Հայր Վարդան Վրդ. Թաշճեան, որ ընթերցեց Գանատայի Հայոց Թեմի առաջնորդին «Օրհնութեան գիր»ը՝ նուիրուած ՀՄԸՄ-Կամքի վաթսուամեակին:

Ապա ելոյթ ունեցաւ Թեմի բարեջան առաջնորդ Տ. Բաբգէն Արք. Չարեան, որ ողջունեց բոլորը եւ ըսաւ. «Այսօրուան ձեռնարկը եկաւ փաստելու, թէ ասկէ հարիւր տարիներ առաջ միութեանս հիմնադիր նախակարապետները հասած են իրենց նպատակին՝ ՀՄԸՄ-ի դրօշին տակ ի մի բերել Հայ երիտասարդները եւ խտացնել անոնց շարքերը»: Ապա Սրբազան Հայրը ուժ, կորով եւ բարի երթ մաղթեց բոլորին ու «Պահպանիչ»ով փակեց հանդիսութիւնը:

Ձեռնարկի աւարտին մթնոլորտը ճոխացուց DJ Ռաֆֆին:

Ծողիկ Ազարիկեան

Համացացանցի վրայ
Երկիր Մետիայի
«Երկիրն այսօր» ծրագրի լուրերը
համակարգչային պատկերասփռումով
դիտելու համար այցելեցէ՛ք

www.yerkirmedia.am



«Համազգայինի ծրագիրները միշտ մեր ուժերէն վեր եղած են, բայց յամառութեամբ ու յարատեւ ջանքերով անոնք իրականացուած են»

Հարցազրոյց Համազգայինի Կեդրոնական վարչութեան ատենապետ ընկ. Մկրտիչ Մկրտիչեանի հետ

Ինտերվյու Լուսինե Բաղդասարյանի հետ

14 Հոկտեմբեր 2018-ին, Մոնթրէալի մէջ տեղի ունեցաւ Համազգայինի 90-ամեակի տօնակատարու–թիւնը, որուն բանախօսն էր Համազգայինի Կեդրո–նական վարչութեան ատենապետ ընկ. Մկրտիչ Մկրտիչեան։ Ան 18 Հոկտեմբերին այցելեց «Հորի–զոն»ի խմբագրատուն։ Ստորեւ կը ներկայացնեմք վարիչ խմբագիր Վահագն Գարագաշեանի հարցազ–րոյցը ընկեր Մկրտիչեանի հետ այս առթիւ .

Հ.– Համազգայինի գլխաւոր առաքելութիւննե–րէն մէկն է կրթութեան մեր ամրոցները, որոնց հիմ–նադրման եւ կառուցման կապակցութեամբ՝ պատ–մութիւն կերտած է Համազգայինը։ Այսօրուան դրու–թեամբ, ի՞նչ վիճակ կը պարզեն Համազգայինի ձե–մարանները։

Մ.Մ.– Մեր դպրոցներուն իրավիճակին մասին նախ ըսեմ, որ մեր հիմնական հաստատութիւնը Պէյրու–թի ձեմարանն է, այդ անունը տամ, որպէսզի հասկնալի ըլլայ, որովհետեւ այդ հաստատութիւնը հիմնուած է որպէս Հայ ճեմարան, ապա եղած է Նշան Փալանճեան, աւելի ուշ՝ Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան ճեմարան։ Անուններու այս փոփոխութիւնը եղած է բարերարնե–րու տրամադրած մեծարժէք գումարներուն պատճառով, թէեւ հին բարերարներուն անունները անպայման կը պահուին։ Այս ճշգուժէն ետք ըսեմ, որ կրթական գետ–նի վրայ՝ ձեմարանը բացառիկ իրավիճակ կը պարզէ, հակառակ անոր որ գիտակրթական ասպարէզին մէջ միշտ սրբագրելի, նորոգելի եւ արդիականութեան հետ քայլ պահելու հարցեր կան, ինչպէս նաեւ լիբանանա–հայութեան թիւն ալ նոսրացած է, սակայն կը կրկնեմ՝ Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան ճեմարանը նախան–ձեւի դերք ունի եւ նոր թափով վերանորոգման հանգը–ուան մը կ'ապրի, շնորհիւ նոր տնօրէնին, առանց ժխտելու, որ ձեմարանը նոյնիսկ պատերազմի օրերուն հայ կրթութեան դարփնոց եղած է, որուն վկաները դո՛ւք էք, ձե՛ր սերունդը, որ պատերազմի օրերուն ձե–մարան յաճախեցիք, եւ այսօր բոլորդ պաշտօններ ստանձնած էք թէ՛ Գանատայի, թէ՛ Ամերիկայի մէջ եւ ալլուր։ Գալով պետական քննութիւններուն՝ յաջողու–թեան համեմատութիւնը մի՛շտ 100 %–ի շուրջ եղած է, իսկ հայագիտական նիւթերու հարցով՝ «Ազգակ»ի «Զաւարեանական» էջը վկայ է մեր աշակերտներուն մակարդակին մասին, ուր ուսուցիչները, բացի ուղղադ–րական սխալներէ, ոճն ու խորքը սրբագրութեան չեն ենթարկեր, կը հրատարակենք նաեւ «Ջահակիր»ը, որ հարազատ պատկերն է մեր աշակերտներուն հայերէնա–գիտութեան։

Նոյնը կրնամ ըսել Մարսէյլի պարագային՝ քիչ մը վերապահութեամբ հայագիտական նիւթերու առնչու–թեամբ, որովհետեւ այդտեղ ալ տեսակի դժուարու–թիւններ կան, իսկ ինչ կը վերաբերի աշակերտութեան թիւին՝ դպրոցը հասած է իր կարողականութեան վերին սահմանին, այսինքն 400 հոգիի համար կառուցուած դպրոց է, եւ 390–էն աւելի է աշակերտութեան թիւը. տարիներէ ի վեր դպրոցը աշակերտ մերժելու վիճակին մէջ է, այդ հարցը տեղւոյն պատասխանատուները պէտք է լուծեն, որովհետեւ մենք չենք ուզեր մերժել հայերէն սորվիլ եւ հայկական մթնոլորտին մէջ մնալ ուզող աշակերտը։

Ունինք նաեւ Աւստրալիոյ դպրոցը, որուն մասին նոյն բանը կրնամ ըսել։ Բայց Համազգայինի նորու–թիւնը այն է, որ քանի մը տարիէ ի վեր կը գործակցինք Փարիզի Թարգմանչաց վարժարանին հետ, իրենց հրա–ւէրով, այսինքն դպրոցի պատասխանատուները անդ–րադարձած են, որ Համազգայինը իր դպրոցները յա–տուկ գուրգուրանքի առարկայ կը դարձնէ։ Կը մտած–ուի նախակրթարանին կողքին դպրոցը օժտել միջնա–կարգով։ Դպրոցը վերակոչուեցաւ Համազգային Թարգ–մանչաց վարժարան, եւ այնուհետեւ աշակերտութեան թիւը աւելցաւ։ Ըսեմ նաեւ, որ Համազգայինի ներկայա–ցուցած տնօրէնը նոյնպէս ճեմարանական է, եւ դպրոցը իր յաջողութիւնը կը պարտի իրեն, աւելի քան Կեդրո–նական վարչութեան։

Հ.– Անցնող քառամեակին Համազգայինը սերտ համագործակցութեան մէջ էր Երեւանի պետական

համալսարանին հետ, եւ այդ համագործակցութենէն ծնունդ առած է նաեւ հայերէնի ուսուցիչներու պատ–րաստման ծրագիրը։ Ի՞նչ վիճակ կը պարզէ այսօր այդ ծրագիրը։

Մ.Մ.– Երեւանի Պետական Համալսարանին հետ գործակցութիւնը սկսած է Համազգայինի հիմնադրման իսկ օրերէն, այսինքն վերջին քանի մը տարիներու երե–ւոյթ չէ. յիշեցնեմ, որ Լիբանանի մեր Հայագիտական հիմնարկին դասախօսները կա՛մ Երեւանի Պետական Համալսարանին պաշտօնեաներ էին եւ կա՛մ Հայաստա–նի Գիտութիւններու ակադեմիայի անդամ գիտնական–ներ։ Զմոռնանք նաեւ, որ ձեմարանի հիմնադիրներէն Նիկոլ Աղբալեանը Երեւանի Պետական համալսարանի ալ հիմնադիրն է, այնպէս որ գործակցելու ձգտում միշտ ալ եղած է երկուստեք։

Երեւանի Պետական Համալսարանին հետ գործակ–ցաբար կ'իրագործենք երկու ծրագիր. առաջինը գիտա–ժողովներու կազմակերպումն է, որ կ'իրականցուի տա–րեկան դրութեամբ։ Ծանօթ է բոլորիս, որ սփիւռքահայ գրադէտներու հարցով վերապահութիւն կար համայնա–վար կարգերուն կողմէ։ Սփիւռքի մէջ արեւելահայ գրականութիւն կը դասաւանդուէր, մինչ Հայաստանի մէջ արեւմտահայ գրողներու հանդէպ անբաղձալի կեց–ուածք կար, ուրեմն մենք հայրենի հասարակութեան արեւմտահայ գրադէտները ծանօթացնելու հարց ունէ–ինք՝ ուսանողութեան ճամբով։ Այս մէկը կենսական պատճառը եղած է այդ գիտաժողովներուն։

Երկրորդ ծրագիրը մշակուեցաւ Լիբանանի Հայա–գիտական հիմնարկին փակուելէն ետք։ Հայերէնի ուսու–ցիչներու, ինչպէս նաեւ լրագրողներու, խմբագիրներու պատրաստման խնդիր ունէինք, հետեւաբար հինգ տարիէ ի վեր այս հարցով կը գործակցինք Երեւանի Պե–տական Համալսարանին հետ. արդէն երեք չրջանաւարտ–ներ ունինք, որոնցմէ երկուքը կը պաշտօնավարեն Լի–բանանի հայկական վարժարաններու մէջ (մէկ հատը՝ ճե–մարան), իսկ երրորդը կը պաշտօնավարէ Նարեկ վարժա–րան, Նիկոսիա։ Նշեմ, որ թեկնածուներուն Զաիշախիչ մեծամասնութիւնը կու գայ Լիբանանէն, բացի մէկ հոգիէ, որ կու գայ Պոլսէն. այսինքն այն չրջանները որոնք ամենէն շատ պէտք ունին (Արեւմտեան Եւրոպա, Գանատա, Միացեալ Նահանգներ, Հարաւային Ամերիկա), տակաւին այս ծրագրին դժբախտաբար չեն մօտեցած։ Այդ երկիրներու պետութիւնները, հասկնալի պատճառ–ներով, այլեւս կը պահանջեն, որ իրենց հաստատութիւն–ներուն մէջ պատրաստուին ուսուցիչները, հետեւաբար մենք կը պահանջենք, որ ենթադրեալ պաշտօնավարու–թեան երկրէն ներս կրթական ասպարէզի վկայականը առնելէ ետք ուսանողները հետեւին Երեւանի Պետական Համալսարանի երկու տարուան մագիստրոսականին՝ հա–յագիտական նիւթերու, որպէսզի երկիր վերադառնալէ ետք իրաւունք ունենան պաշտօնավարելու մեր հայկա–կան վարժարաններէն ներս։

Հ.– Համազգայինը իր ցանցաւարած գործունէ–ութեամբ տարածուած է սփիւռքի զանազան գաղութ–ներու մէջ, եւ մշակութային իր առաքելութեամբ գոր–ծօն դերակատարութիւն ունի այդ համայնքներէն ներս. ուշագրաւ երեւոյթ է սակայն, որ կարգ մը ցա–մաքամասերու եւ հալաիոծ շրջաններու մէջ տակաւին մուտք չէ գործած, խօսքս կը վերաբերի Արեւելեան Եւրոպային, Հարաւային Ամերիկային եւ յատկապէս 2 միլիոն հաշուող Ռուսաստանի գաղութին. արդեօ՞ք Համազգայինը հեռակայ ծրագիրներ ունի աշխար–հագրական այս տարածքներուն մէջ։

Մ.Մ.– Նախ յայտնեմ, որ Միացեալ Նահանգնե–րուն կամ Ամերիկեան ցամաքամասին մէջ ընդհանրա–պէս կրթական հաստատութիւն չունի Համազգայինը. ատիկա արդիւնք էր այն մտայնութեան, որ գոյութիւն ունէր մինչեւ նախորդ դարու 60–ական թուականները, թէ՛ այս ցամաքամասը ազգերու ցուլման միջավայր է, հետեւաբար որեւէ կրթական հաստատութիւն այստեղ չի կրնար յաջողութիւն գտնել, մենք օժանդակենք Մի–ջին Արեւելքի հաստատութիւններուն, որպէսզի արդի–ականանան եւ մեզի հարկ եղած անձնկազմը ուղարկեն։ Այսօր կը տեսնենք, որ այդ քաղաքականութիւնը այդ–քան ալ ճիշդ չէր եղած, եւ կրթական հաստատութիւն–

ները ինչքան ալ խոցելի կէտեր ունենան, անհրաժեշտ են։ Սակայն ըսեմ նաեւ, որ Համազգայինը առանձնա–բար կարելիութիւնը, մանաւանդ՝ նիւթական կարելիու–թիւնը չունի նման հաստատութիւններ հիմնելու, բայց եթէ այդպիսի տրամադրութիւն կայ, Համազգայինը եր–բեք չի կրնար այդպիսի բան մերժել, յատկապէս, եթէ ապահովուին նիւթական միջոցները։ Գալով ձեր հար–ցումին, մեր կառոյցները, որոնց մասին խօսեցայ, Կեդ–րոնական վարչութեան Պատգամաւորական ժողովներու առնուած որոշումներու գործադրութիւնները եղած են։ Ճիշդ է, որ Համազգայինը մշակութային գործունէու–թեան հարցով (պարախումբ եւ այլն) կը գործէ ապա–կեդրոնացեալ դրութեամբ եւ համագործակցութեամբ տեղւոյն ալ մարմիններուն հետ, սակայն կրթական մարզը գրեթէ ամբողջութեամբ Կեդրոնական վարչու–թիւնը իր ուսերուն վրայ առած է, որովհետեւ կ'են–թադրուի, որ այդ կեդրոնացումը անհրաժեշտ է այդ պարագային։ Համազգայինը այսօր կը գործէ 16–17 երկիրներու մէջ, նոր չրջաններէն յիշեմ Քուէյթը, ինչ–պէս նաեւ վերը նշուած Փարիզի Համազգայինի Թարգ–մանչաց վարժարանի որդեգրումէն ետք նոր մասնա–ճիւղ մը պիտի հիմնուի մօտօրէն չոն։

Ինտերվյու Լուսինե Բաղդասարյանի հետ

Հ.– Ողջունելի երեւոյթ է Համազգայինի ծլար–ձակումը Արցախի Հանրապետութեան մէջ, այնտեղ կը գործէ արդէն Համազգայինի գրասենհակը եւ որ–պէս առաջին միջոցառում՝ համերգ մը կազմակերպ–ուեցաւ Ստեփանակերտի մէջ։ Ի՞նչ ծրագիրներ ունի Արցախի Համազգայինը։

Մ.Մ.– Պէտք է ճշգեմ, որ Արցախի, ինչպէս Երեւա–նի պարագային, Համազգայինը ունի միայն գրասեն–հակներ, կառոյցներ չունինք, մասնաճիւղեր չունինք, եւ առ այսօր նման մտագրութիւն ալ չկայ, որովհետեւ այնտեղ, ուր Կրթական նախարարութիւն կայ, Մշակոյթի նախարարութիւն կայ, Համազգայինը չի կրնար այդ մակարդակի դերակատարութիւն ունենալ։ Համազգայի–նի մասին ըսուած է, թէ ան սփիւռքեան գաղութներու կրթական եւ մշակութային նախարարութիւնն է։ Մինչ Հայաստանի եւ Արցախի պարագային՝ այդ մէկը խորթ կը թուի, հետեւաբար մենք ունինք գրասենհակներ, որոնք ձեռնարկներ եւ գիտաժողովներ կը կազմակերպեն։ Արցախի մէջ եւս ունեցանք գիտաժողով Արցախի հա–մալսարանէն ներս, սակայն մեր առաքելութեան մաս կը կազմէ նաեւ Արցախի սահմանամերձ չրջաններուն մէջ մշակութային կեանքը կազմակերպել, քաջալերել կամ գոնէ թափոն մը ներկայացնել։

Ինտերվյու Լուսինե Բաղդասարյանի հետ

Հ.– Այսօր կ'ապրիմք գիտարուեստի յառաջընթա–ցի ժամանակներուն մէջ. այս գծով Համազգայինը իր հրատարակչական, կրթական թէ մշակութային գոր–ծունէութեան մէջ ինչպէ՞ս քայլ կը պահէ գիտարուես–տի զարգացումներուն հետ եւ այդ զարգացումներուն զուգընթաց՝ ինչպէ՞ս կը ներգրաւէ նոր սերունդը։

Մ.Մ.– Կարելոր մատնանշում մըն է այս։ Ըսեմ, որ աւարտական իր փուլին հասցուցած ենք յատուկ մշա–կութային կայքէջ մը, որ հրապարակ կ'իջնէ ամենէն ու–շը՝ յաջորդ երեք ամիսներուն ընթացքին։ Այդ կայքէջը ընդհանրական անցեալը ներկային կապող, աշխարհագ–րական բոլոր շրջանները ներառող, մշակոյթի բոլոր ար–տայայտութիւնները ընդգրկող, ինչպէս նաեւ օգտա–գործողներու հետ անմիջական յարաբերութեան մէջ մտնելու իմաստով բացառիկ առիթ պիտի ըլլայ։ Մեր հրատարակելի կայքէջին անունն է h–pem, հայերէն բեմ, զոր լատինատառ կը գրենք, որովհետեւ սկզբնա–կանօրէն օգտագործելի լեզուն պիտի ըլլայ անգլերէնը՝ կարենալ հասնելու համար բոլոր սերունդներուն։ Այս մէկը մեծ քայլ է դէպի արդիականացում, թերեւս քիչ մը ուշացած, թերեւս քիչ մըն ալ մտավախութեամբ՝ յատկապէս նիւթական միջոցներ ապահովելու հարցով, սակայն միշտ ալ Համազգայինի ծրագիրները մեր ուժե–րէն վեր եղած են, եւ յամառութեամբ ու յարատեւ ջան–քերով իրականացուած։ Մենք կը վստահինք մեր հասա–րակութեան ներդրումին եւ վստահ ենք, որ իրենց աջակցութիւնը պիտի չզլանան։

Հարցազրոյցը վարեց՝ Վահագն Գարագաշեան



ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ

Իվան Սրկ. Գիադայեանի


Այսու ուրախութեամբ մեր հաւատացեալ ժողովուրդի զաւակներուն կը յայտնենք, որ Շարաք, **1 Դեկտեմբեր 2018-ի** երեկոյեան ժամը **6:00**-ին, յրնթացս Կիրակնամուտքի ժամերգութեան, Մոնթրէալի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ Քահանայական Կոչման արարողութիւն:

Կիրակի, **2 Դեկտեմբեր 2018-ին**, դարձեալ Մոնթրէալի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, տեղի պիտի ունենայ Քահանայական Ձեռնադրութիւն եւ օծում, առաւօտեան ժամը **11:00**-ին, յրնթացս Ս. Պատարագին:

Պատարագը, Ձեռնադրութիւնն ու Օծումը պիտի կատարէ Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արք. Չարեան

Հետեւաբար, կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդի զաւակներուն անխտիր, հոծ բազմութեամբ ներկայ գտնուելու Ս. Պատարագին, կոչման եւ ձեռնադրութեան հոգեպարար արարողութիւններուն:

ԴԻՒՐՆ
ԳԱՆԱՏԱՐ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՍ
ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ,



UN MOT DE VOTRE
conseiller

Երկու խօսք՝
քաղաքապետարանի
անդամին կողմէ.

Յարգելի՛ քաղաքացիներ

Եւ Ռենո շրջանի քաղաքապետարանի անդամ Արամ Էլակեօզն եմ եւ Լաւալէն ընտրուած միակեայը: Օգտուելով ինձի տարածադրութեան այս սիւնակէն, կ'ուզեմ դիմել մեր համայնքի անդամներուն՝ մեր լեզուով: Ընտրուած օրէս ի վեր կարգ մը քաղաքացիներ շահագործուած են ընտրատարածքիս եւ ընդհանուր Լաւալի մէջ ինքնաշարժներու կայանատեղիներու բարեկամ ման հարցով, եւ այդ անհաշիւ անարար անտեղ ներկայացուցիւն առաջարկներ: Այս սեկը քաջազեղելի է, որովհետեւ Լաւալի քաղաքապետարանը ներկայիս բարեփոխութեան կենթարկէ քաղաքին իրավիճակը եւ խորհրդակցութեան կը երաւիրէ, բնակչութիւնը: Երկու միջոց կ'այ խորհրդակցութեան մասնակցելու. առաջինը՝ այցելելով repersonslaval.ca/stationnement կայքէջը եւ առջանց տեղադրելով ձեր առաջարկները, իսկ երկրորդը՝ ուղարկելով ձեր հարցումներն ու կարծիքները helen@laval.ca եւ-համակի հասցէին consultations@laval.ca, մինչեւ 30 Նոյեմբեր:

Կը յայտնեմ ետեւ լրիւ պատրաստակամութիւնս ձեզի օգտակար դառնալու:

Կապի տուեալներս են՝ a.elagoz@laval.ca

Ե-տուեալի հասցէն եւ 514-963-7464

հեռախօսակապը:

Ցանկութիւն:

**Aram
ELAGOZ**

Conseiller municipal
de Renaud



**MOUVEMENT LAVALLOIS
ÉQUIPE MARC DEMERS**

LET'S BUILD BETTER CITIZENS



The human experience at the centre of history

Visit our Education page
museeholocauste.ca



Musée Holocauste Montréal
Montreal Holocaust Museum

Learn more about the Armenian genocide

United Against Genocide
genocide.mhmc.ca/en/



Ս. ՅԱԿՈԲ ԱՌԱՋ. ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՈՅ
ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ

60-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻ ՅՈՒԲԵԼԵՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Օրհնությամբ եւ Նախագահությամբ՝
Գերշ. Տ. Բարգիւն Արք. Չարեանի
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին

Հովանաւորությամբ՝
«Բաւարմաճեան» Հիմնադրամի

Կազմակերպությամբ՝
Ս. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցւոյ Հոգաբարձութեան

Շաբաթ, 15 Ռեկտեմբեր 2018

Երեկոյեան ժամը 7:30-ին
Հայ Կեդրոնէն ներս

Սեղաններ ապահովելու համար հեռաձայնել

Տիկ. Նայիրի Բարախեանին. 514 891-4361

Եկեղեցւոյ քարտուղարութեան. 514 331-5445 x 202

Մուտքի նուէր՝ \$60.00

**EDGY. DYNAMIC. ATHLETIC.
COME AND EXPERIENCE THE
ALL-NEW 2019 COROLLA HATCHBACK.**

